

ցաւ Վրաստան եւ հոն ալ վախճանեցաւ 1622էն
 իչ շատ ետքը (1623^o) :

Փամանակակիցները միարան կը վկայեն
 Աւետիսի պարկեշտ վարքին մասին . իւր բա-
 րութեամբը , մեղմ բնաւորութեամբը Մելքի-
 սեղեկ կաթողիկոսի հակապատկերն էր : Ու-
 նէր որոշ չափով մտաւոր զարգացում . ըն-
 թերցասէր էր եւ դրասէր , ինչպէս իր օրինա-
 կած գրքերը ցոյց կու տան եւ կը վկայեն Գրի-
 գոր Դարանաղցի եւ Մովսէս վարդապետ :
 ժողովուրդը կը սիրէր զինքը եւ Ամիրդունա-
 իտան կը յարգէր իր անձը : Բայց չունէր վար-
 չական կարողութիւն , դժուարին պայմաննե-
 րու մէջ ժողովրդեան առաջնորդելու ոյժը :
 Անփառասէր էր , այս պատճառաւ չունեցաւ
 բախում ոչ Դաւիթ եւ ոչ Մելքիսեղեկ կա-
 թողիկոսներու հետ . քաղաքական իշխանու-
 թիւնն ալ չհալածեց զինքը : Թերեւս այս չե-
 ցոք զիրքին համար ալ չարժանացաւ Առաքել
 Դաւրիթեցւոյ ուշադրութեան :

10. «ՄԵՆԼՈՒ ՎԱՐԴԱՊԵՏ»

Փամանակի բարքերու անկման մէկ երե-
 ւոյթն էր «Մելիլու վարդապետի» յայտնու-
 թիւնը իրր 1617ին : Այս մասին ընդարձակ կը
 խօսին Գրիգոր Դարանաղցի եւ Զաքարիա
 Սարկաւազ : Իրողութիւնն այս է :

Կը գրէ Զաքարիա (Ա. 47/8) . «Այր մի
 < էր > ազգաւ աղուան , որ այժմ ասեն Ուտի ,
 ի Գանձակ քաղաքէ Աղուանից , որ զնացեալ